Հ. Խ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ՀԱՄԱՐ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՄՂԱԾ ՊԱՅՔԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

(1917 թ. փետրվար—1917 թ. սեպտեմբեր)

Համաշխարհային պրոլետարիատի շահերը պահանջում էին ստեղծել մի այնպիսի կազմակերպություն, որն ի վիճակի լիներ կազմակերպել և ղեկավարել բանվոր դասակարգի պայքարը՝ բուրժուազիայի դեմ մղվող պայքարում։ Այդպիսի կազմակերպություն հանդիսացավ 1864 թ. Մարքսի և Էնգելսի կողմից ստեղծված Առաջին Ինտերնացիոնալը, որը հսկայական դեր խաղաց մարքսիզմի տարածման, սոցիալիզմը բանվորական շարժման հետ միացնելու գործում։

1889 թ. ստեղծվեց II Ինտերնացիոնալը, որը, սակայն, առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբին կրախի ենթարկվեց։ Նրանում տիրապետող դիրք գրավեց սոցիալ-շովինիզմը, որի նպատակն էր բանվոր դասակարգի շահերը ենթարկել բուրժուազիայի շահերին։ Սոցիալիզմին հավատարիմ մնացած բոլշևիկյան կուսակցությունը և առանձին երկրներում եղած ձախ խմբերը պատերազմի տարիներին ոչ միայն ակտիվ պայքար սկսեցին պատերազմի և սոցիալ-շովինիզմի դեմ, այլ միաժամանակ պայքար սկսեցին հանուն նոր, հեղափոխական, կոմունիստական Ինտերնացիոնալի։ Դրա առաջին քայլը հանդիսացավ ցիմմերվալդյան խմբավորման ստեղծումը[1]*, ուր շուտով տիրապետող դիրք գրավեցին ցենտրիստները, սոցիալ-պացիֆիստները, որոնք միայն խոսքով էին ընդունում պրոլետարիատի ազատագրության համար պայքարի անհրաժեշտությունը, իսկ իրականում վարում էին նույն սոցիալ-շովինիստական քաղաքականություն։*

1916—1917 թթ. ցիմմերվալդյան ձախերի ազդեցությունը բավականին աճեց։ Ցիմմերվալդյան ձախերի շահերի արտահայտիչներն էին Գերմանիայում՝ „Lichtstrahlen“ *(«Լույսի ճառագայթներ»),* „Arbeiterpolitik“ *(«Բանվորական քաղաքականություն»), անլեգալ* „Spartakusbriefe“ *(«Սպարտակի նամակներ»), Շվեյցարիայում՝* „Die freiejugend“ *(«Ազատ երիտասարդություն»),* „Voix des jeunes“ *(«Երիտասարդության ձայն»),* „Jugend Internationale“ *(«Ինտերնացիոնալ երիտասարդություն»),* „Le sentinelle“ *(«Ժամապահ»), Շվեդիայում՝* „Stornkloken“ *(«Ահազանգ»),* „Politiken“ *(«Քաղաքականություն»), Նորվեգիայում՝* „Klassenkamfen“ *(«Դասակարգային պայքար»), Անգլիայում՝* „Call“ *(«Կոչ»), ԱՄՆ-ում՝* „The Internationalist“ *(«Ինտերնացիո-*

---

1 *Ցիմմերվալդյան խումբը ստեղծվեց 1916 թ. Ցիմմերվալդի կոնֆերանսում և ավելի ամրապնդվեց Կինտալի կոնֆերանսում։*

նալիստ»), Հոլանդիայում՝ „The tribunau", Լեհաստանում՝ „Gorata Robotnieze" և ուրիշներ։

Ռուսաստանում տեղի ունեցած փետրվարյան հեղափոխությունը հսկայական չափով ազդեց միջազգային պրոլետարիատի շարժման հետագա զարգացման վրա, խթան հանդիսացավ հեղափոխական հզոր վերելքի համար՝ ընդդեմ պատերազմի և «իրենց» իմպերիալիստական կառավարությունների ռեակցիոն քաղաքականության։ Շվեյցարիայի բանվորներին գրած հրաժեշտի նամակում, 1917 թ. ապրիլին, Վ. Ի. Լենինը գրում էր, որ «հեղափոխության ալիքներն արագորեն կսրբեն այս կեղտոտ փրփուրը համաշխարհային բանվորական շարժման վրայից»[2], կսրբեն Շայդեմաններին, Լեգիններին, Սամբաներին, Գեղերին և նրանց նմաններին։ Հեղափոխության ազդեցության ներքո բանվորական շարժման փոթորիկն անցավ ողջ Եվրոպայով։ Գերմանիայում ամենուրեք տեղի էին ունենում հեղափոխական ելույթներ՝ Համբուրգում, Հաննովերում, Հալլեում և մյուս խոշոր բանվորական կենտրոններում։ «Սպարտակ» խմբի կողմից հրապարակված «Կարմիր վտանգը» թռուցիկում ասվում էր. «Ռուսաստանում մարտյան հեղափոխության փոթորիկը սրբեց ցարիզմը և պետք է հուսալ, որ այն վերջ կտա նաև շարունակվող պատերազմը»[3] և կոչ էր արվում գերմանական պրոլետարիատին՝ հետևելու ռուսական բանվոր դասակարգի օրինակին։ Ռուսական հեղափոխության ազդեցության ներքո և հանուն նրա պաշտպանության գործադուլային և հեղափոխական շարժումներ եղան Ֆրանսիայում, Իտալիայում, Անգլիայում, Հունգարիայում, Բուլղարիայում և մյուս երկրներում։ Ամենուրեք պայքար էր մղվում իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու համար։

«Իմպերիալիստական պատերազմը, այսինքն՝ կողոպտված ավարը կապիտալիստների միջև բաժանելու,—գրում էր Վ. Ի. Լենինը,—թույլ ժողովուրդներին խեղդելու համար մղվող պատերազմը սկսել է վերածվել քաղաքացիական պատերազմի, այսինքն՝ կապիտալիստների դեմ բանվորների պատերազմի, իրենց ճնշողների դեմ, ցարերի ու թագավորների դեմ, կալվածատերերի ու կապիտալիստների դեմ մղվող աշխատավորների ու ճնշվածների պատերազմի, մարդկությունը պատերազմներից, մասսաների աղքատությունից, մարդու կողմից մարդու ճնշումից լիովին ազատագրելու համար մղվող պատերազմի»[4]։

Ելնելով այն հանգամանքից, որ հեղափոխական շարժումներն ամենուրեք վերելք էին ապրում, որ հեղափոխական ինտերնացիոնալիստները մեծ ուժ էին դարձել, որ սոցիալ-շովինիզմը իրեն վերջնականապես խայտառակել էր, իսկ ցիմմերվալդյան մեծամասնությունը՝ կաուցկիականները խանգարում էին պրոլետարիատի համախմբմանը, Վ. Ի. Լենինը հզրակացրեց, որ այժմ արդեն բոլոր պայմանները հասունացել են հեղափոխական նոր Ինտերնացիոնալ ստեղծելու համար։

Բոլշևիկյան կուսակցության 1914 թ. նոյեմբերի լոզունգը՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու մասին, թշնամանքով ու չարամիտ ծաղրով դիմավորեցին սոցիալ-հայրենասերները, իսկ «կենտրո-

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 497։

3 Э. Дран и С. Леонард, Подпольная литература революционной Германии за время мировой войны. М., изд. «Красная Новь», 1924, стр. 91.

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 466։

նի» սոցիալ-դեմոկրատները՝ թերահավատությամբ, կասկածամտությամբ և անհաստատակամ-սպասողական լռությամբ։ Գերմանական սոցիալ-շովինիստ, սոցիալ-իմպերիալիստ Դավիդն այդ լոզունգն անվանեց «խելագար», իսկ Պլեխանովն՝ ցնորք-ֆարս (mittilding zwischen traum und komödie)...

«Այժմ, 1917 թ. մարտից հետո, միայն կույրը կարող է չտեսնել, որ այս լոզունգը ճիշտ է։ Իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելը փաստ է դառնում»[5]։ Վ. Ի. Լենինը ընդգծում էր, որ Ցիմմերվալդը կրախի կենթարկվի և առաջարկում էր անհապաղ ստեղծել նոր ինտերնացիոնալ, նշելով, որ այն առերես գոյություն ունի՝ հանձին «ցիմմերվալդյան ձախի»։ ԻՍՀ-ին[6] ուղարկած դիմումի թեզիսների սևագիր ուրվագծում, արդեն 1917 թ. հունվարի 7-ին նա նշում էր, որ «Ցիմմերվալդյան մեծամասնությունը կամ ցիմմերվալդյան աջն ամբողջովին շրջվել է ոչ թե սոցիալ-շովինիզմի դեմ պայքարելու, այլ դեպի բոլոր դիրքերի հանձնում, դեպի միաձուլում նրա հետ՝ դատարկ պացիֆիստական ֆրազների պլատֆորմայով»[7]։

Ցենտրիստները շարունակում էին մնալ իրենց դիրքերում և մտադիր էին սոցիալ-հայրենասերների հետ միասին վերականգնել II Ինտերնացիոնալը։ 1917 թ. հունվարին գրած «Պատերազմի և իրենց կառավարությունների կողմն անցած սոցիալիստների դեմ պայքարին աջակցող բանվորներին» կոչում Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ ցիմմերվալդյան աջը Կինտալից հետո մի շարք խոշորագույն երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում լիովին և ամբողջովին գլորվել է դեպի Կինտալում դատապարտված ու մերժված սոցիալ-պացիֆիզմը[8]։

Պրոլետարիատի հեղափոխական պայքարին՝ պատերազմի և կապիտալիզմի դեմ, որի անհրաժեշտությունը ընդունվել էր և հռչակվել Ցիմմերվալդում ու Կինտալում, դավաճանեց ցիմմերվալդյան մեծամասնությունը և այն դարձավ իրենց սոցիալ-պատրիոտիզմը և բուրժուական ռեֆորմիզմը ծածկելու շիրմա։ Ցիմմերվալդյան մեծամասնության ամոթալի տատանումները և հրաժարումը կարևորագույն, պրակտիկորեն որոշող հարցերից, նրան կանգնեցրին կրախի ենթարկվելու փաստի առաջ։ Ստեղծված իրադրության մեջ աջակցել ցիմմերվալդյան մեծամասնությանը, Վ. Ի. Լենինը հանցագործություն էր համարում։ Նա գտնում էր, որ հասել է ժամանակը, հասունացել են բոլոր պայմանները, սկսելու պայքարը նոր ինտերնացիոնալ ստեղծելու համար[9]։ Իսկ մարտի 5-ին՝ Կոլոնթային գրած նամակում նա ընդգծում էր, որ «...Ցիմմերվալդը» ակնհայտորեն սնանկացել է, և լավ խոսքը կրկին ծառայում է նեխվածքը քողարկելու համար։ Ցիմմերվալդյան մեծամասնությունը, այդ Տուրանտին և ընկ. Կաուցկին Լեդեբուրի, Meerheim-ի հետ—բոլորը անցել են սոցիալ-պացիֆիզմի դիրքը, որն այնքան հանդիսավորապես (և այնքան անպտուղ) դատապարտվեց Կինտալում»[10]։ Հենց այդ ժամանակ, երբ

---

5 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 23, էջ 498։

6 ԻՍՀ — Ինտերնացիոնալ սոցիալիստական հանձնաժողով. ստեղծվել էր Ցիմմերվալդյան առաջին կոնֆերանսում որպես ցիմմերվալդյան խմբի ղեկավար օրգան։

7 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 23, էջ 283։

8 Տե՛ս «Борьба большевиков за создание Коммунистического Интернационала» (сб. документов), М., 1933 г., էջ 68—75։

9 Տե՛ս Центральный партийный архив Института марксизма-ленинизма (ЦПА ИМЛ), ф. 17, оп. 14, ед. хр. 20624.

10 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 35, էջ 313։

բուրժուազիան, որպեսզի փրկվի հեղափոխությունից և ամրապնդի իր ռազմական քաղաքականությունը, պատրաստվում էր զինաթափել պրոլետարիատին և պացիֆիստական ֆրազների քողի տակ (սոցիալ-շովինիստական և կաուցկիական) աշխատում էր զինվորներին ռազմաճակատի խրամատներից վերադարձնելուց հետո դարձնել կապիտալիստական ֆաբրիկայի կցորդ, բոլշևիկյան լոզունգը՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու մասին, ձեռք էր բերում հակայական ու հատուկ նշանակություն։ Եվրոպայում ստեղծվել էր հեղափոխական ճգնաժամ։ Օրակարգում դրվել էր պրոլետարական ուժերի անմիջական կազմակերպման և ղեկավարման հարցը՝ կապիտալիստական կառավարությունների վրա ճնշում գործադրելու և այն տապալելու համար։ Այսպիսի պայմաններում, ցիմմերվալդյան բլոկը, որի մեջ մեծ տեղ էին գրավում հին Ինտերնացիոնալի տատանվող տարրերը, արգելք էր հանդիսանում միջազգային բանվորական շարժման հետագա զարգացման համար։

Փետրվարյան հեղափոխությամբ ցիմմերվալդյան բլոկի մեջ առաջ եկած ճեղքն ավելի խորացավ։ Բեռնի արտակարգ նիստում, որին մասնակցում էին Շվեյցարիայում գտնվող արևմտա-եվրոպական և ռուսական ցիմմերվալդականները, «ջերմ կոչ» մշակվեց ուղղված ամբողջ աշխարհի աշխատավորական մասսաներին, գլխավորապես պատերազմող երկրների աշխատավորներին»[11], «կամ հեղափոխությունը կսպանի պատերազմը, կամ պատերազմը կսպանի հեղափոխությունը»—ասվում էր նրանում, կոչ էր արվում պրոլետարիատին՝ պայքարել դեմոկրատական հաշտության և հեղափոխության համար, որովհետև «ռուսական պրոլետարիատի պայքարը ռուսական տիրող դասակարգերի դեմ, հանդիսանում է պայքար նաև պատերազմի դեմ։ Հաշտություն կամ հանրապետություն, կամ պատերազմի և հակահեղափոխության շարունակում, ահա այն երկընտրանքը, որի լուծումը կախված է համաշխարհային պրոլետարիատից»[12]։ Մյուս երկրներում սկսել բանվորական ելույթները, նշանակում է օգնել ռուսական պրոլետարիատին։ Ռուսաստանում կատարվող դեպքերը պահանջում են հեղափոխական մասսայական պայքար հանուն հացի, հանուն ազատության, հանուն հաշտության[13]։

Սակայն այս փոքրիկ փաստը չի նշանակում, որ իրոք ցիմմերվալդյան մեծամասնությունը շահագրգռված էր հեղափոխության հաջողությամբ։ Եվ իզուր է ջանում Ա. Բալաբանովան հավատացնել, թե իբր ԻՍՀ-ը իր գործունեությամբ ցանկանում էր օգնել ռուսական պրոլետարիատին, և հենց դրա համար էլ իբր որոշվեց ԻՍՀ-ը Բեռնից տեղափոխել Ստոկհոլմ՝ Ռուսաստանին ավելի մոտ լինելու համար։

Սակայն ցիմմերվալդյան մեծամասնությունը վարակվել էր սոցիալ-պացիֆիզմով և հենց ինքը պայմաններ ստեղծեց պառակտման համար, դրանով իսկ առաջնակարգ պլան մղելով ձախերի միավորման հարցը։ Այդ կապակցությամբ 1917 թ. մարտին Վ. Ի. Լենինը գրում էր. «Նոր սոցիալիզմի, իսկապես հեղափոխական մարքսիզմի ծրագրի ու տակտիկայի և ոչ թե գարշելի կաուց-

[11] Анжелика Балабанова, Из личных воспоминаний циммервальдца, изд. «Книга», М., 1925 г., էջ 98։

[12] O. H. Gankin and H. H. Fisher, The Bolsheviks and the world wer, London, 1940 y, p. 612.

[13] Տե՛ս նույն տեղում։

կիականության հարցն է ամենուրեք դրված օրակարգում»[14]։ Հաճախ սոցիալ-դեմոկրատները, որոնք իրենց մեջ ներառում էին բանվոր դասակարգի լավագույն, առաջավոր, հեղափոխական տարրերին, սակայն կազմակերպված չէին այնպես, ինչպես բոլշևիկները։ Ցույց տալով բոլշևիկների հոգևոր ու քաղաքական պարտականությունը ձախերի միավորման հանդեպ, Վ. Ի. Լենինը անում էր ամեն հնարավորը, որպեսզի օգնի նրանց՝ հաղթահարելու կաուցկիական սխալները, ամուր կանգնելու հեղափոխական մարքսիզմի ուղու վրա։ Այսպես՝ իմանալով, որ շվեդական ձախերը մայիսին հավաքվելու են «ցիմմերվալդյան սկզբունքներով» ինքնուրույն կուսակցություն ստեղծելու համար, Վ. Ի. Լենինն անմիջապես նամակ է ուղարկում Ստոկհոլմում գտնվող Ա. Ս. Կոլոնթային՝ շվեդական ձախերին օգնելու խնդրանքով. «Նախապես հասկանալ սոցիալ-պացիֆիզմի և կաուցկիականության ամբողջ ստորությունը, օգնել նրանց՝ հասկանալու ցիմմերվալդյան մեծամասնության ամբողջ գարշելիությունը, օգնել նրանց մշակելու իրենց նոր պարտիայի համար լավ ծրագիր ու տակտիկա»[15]։

Փետրվարյան հեղափոխությամբ օրակարգում դրվեց քաղաքացիական պատերազմի լոզունգը. «Ռուս բանվորներին պատիվ ու երջանկություն է բաժին ընկել՝ առաջինն սկսել ռևոլյուցիան,— գրում էր Վ. Ի. Լենինը,— այսինքն՝ ճնշողների դեմ ճնշվողների մեծ, միակ օրինական և արդարացի պատերազմը»[16], օբյեկտիվ պատմական պայմանները ռուսական պրոլետարիատին դարձրին հեղափոխական առաջավոր մարտիկ։ Նա հսկայական էներգիա ծախսեց և նրա կուսակցությունը, որը հնարավորություն ստացավ աշխատելու այնուհետև լեգալ պայմաններում, դարձավ միջազգային պրոլետարական, հեղափոխական ուժերի ձգողական կենտրոնը, նոր՝ կոմունիստական Ինտերնացիոնալի ստեղծման համար պայքարի նախաձեռնողը։ Հենց որ առաջին հաղորդումը հասավ Շվեյցարիա, Վ. Ի. Լենինը ցիմմերվալդյան բլոկի բյուրոյի ձախ անդամների առաջ խնդիր դրեց՝ անմիջապես դուրս գալ ցիմմերվալդյան բլոկից։ Ցիմմերվալդյան միավորումն սպառել էր իրեն և Վ. Ի. Լենինն անթույլատրելի էր համարում պատրանքներ սերմանել բանվորների մեջ, թե իբր հնարավոր է շարունակել աշխատանքը կաուցկիականների հետ կողք-կողքի։ Հակառակ Վ. Ի. Լենինի, Զինովևը և Ռադեկը պնդում էին, որ չպետք է դուրս գալ Ցիմմերվալդից, բայց միաժամանակ գտնում էին, որ Մարտովի հետ չպետք է ստորագրել որևէ կոչի տակ[17]։ Չհասկանալով ստեղծված իրադրությունը և ցիմմերվալդյան միավորման փաստացի կրախը, Զինովևն ու Ռադեկը շարունակում էին մնալ դրիմմյան ցիմմերվալդում, դրանով մեծ վնաս հասցնելով աճող հեղափոխական շարժմանը, արգելակելով պրոլետարական Ինտերնացիոնալի ստեղծմանը։ Ցիմմերվալդյան բլոկից դուրս գալու և նոր Ինտերնացիոնալ ստեղծելու հարցը Վ. Ի. Լենինը Ռուսաստան վերադառնալուց[18] հետո կրկին դրեց։

1917 թ. մարտի 16-ին Կոլոնթային գրած նամակում Վ. Ի. Լենինը ընդգծում էր. «Ոչ մի դեպքում նորից երկրորդ Ինտերնացիոնալի տիպի։ Ոչ մի դեպ-

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 315։

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 314, կամ ЦПА ИМЛ, ф. 17, оп. 14, ед. хр. 20616, 20624.

16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 466։

17 Տե՛ս «Энциклопедический словарь Гранат», т. 41—II, էջ 162—163։

18 Այդ գործում ռուս էմիգրանտներին մեծ օգնություն ցույց տվեց Ֆրից Պլատենը։

ում Կաուցկու հետ։ Անպայման ավելի հեղափոխական ծրագիր և տակտիկա (նրա էլեմենտներն ունեն Կ. Լիբկնեխտը, S. R. P.-ն Ամերիկայում, հոլանդական մարքսիստները և այլն) և անպայման լեգալ աշխատանքի միացում անլեգալի հետ»[19]։

Ապրիլի 17-ին բանվորների, զինվորների գեպուտատների սովետների բոլշևիկ դեպուտատների համառուսական խորհրդակցությունում արտասանած ճառում Վ. Ի. Լենինը խոսում էր հեղափոխական ինտերնացիոնալիստների ցիմմերվալդյան խմբավորման մեջ հետագա մնալու աննպատակահարմարության մասին, քանի որ այնտեղ տիրապետող էին դարձել ցենտրիստները։ Դրա հետ միաժամանակ նա ընդգծում էր բոլշևիկների պատրաստակամությունը, իրենց ձեռքը վերցնելու նոր Ինտերնացիոնալ ստեղծելու նախաձեռնությունը, ստեղծելու մի այնպիսի Ինտերնացիոնալ, որը կպայքարի սոցիալ-շովինիստների ու «կենտրոնի դեմ»[20]։ Ցիմմերվալդյան մեծամասնության օպոզիցիոն վարքագծի լենինյան մերկացումը հսկայական դեր խաղաց որոշ բոլշևիկների տատանողական վարքագիծը հաղթահարելու համար, որոնք ձգտում էին միավորվել մենշևիկների հետ՝ ցիմմերվալդյան պլատֆորմի հիման վրա։

Վ. Ի. Լենինի Ռուսաստան վերադառնալուց երկու օր անց տեղի ունեցավ կուսակցական աշխատողների համառուսական (մարտյան) խորհրդակցությունը։ Մենշևիկների հետ միավորվելու առաջարկով հանդես եկավ Ի. Վ. Ստալինը։ Նա ընդգծեց, որ դա հնարավոր է «ցիմմերվալդ-կինտալ գծով»[21], չնայած այն բանին, որ Վ. Ի. Լենինը դեռ 1916 թ. հոկտեմբերին կատեգորիկ կերպով նշել էր, «Հաշտարարությունը և միասնացումը Ռուսաստանում բանվորական պարտիայի համար ամենավնասակար բանն է, ոչ միայն ապուշություն է, այլև պարտիայի կործանում։ Որովհետև «միավորումը» (կամ հաշտեցումը և այլն) Չխեիձեի և Սկոբելևի հետ (նրանց մեջ է էությունը, որովհետև նրանք իրենց ներկայացնում են որպես «ինտերնացիոնալիստներ») — իրականում «միասնություն» է կազմկոմի հետ, իսկ նրա միջոցով Պոտրեսովի և Ընկ. հետ, այսինքն իրականում լակեյություն է սոցիալ-շովինիստների առջև եթե Տրոցկին և Ընկ. այդ չեն հասկացել, ավելի վատ նրանց համար»[22]։

Այդ միտքը Վ. Ի. Լենինը ընդգծում էր պատերազմի ողջ ընթացքում և առանձնապես փետրվարյան հեղափոխությունից հետո։ Վերադառնալով հայրենիք, նա իր ամբողջ ուժերը լարեց այդ խնդիրն իրագործելու համար, հայտարարելով, որ Ցիմմերվալդում այլևս մնալ հնարավոր չէ։ «Ավելի լավ է մնալ երկուսով, ինչպես Լիբկնեխտը—և այդ նշանակում է մնալ հեղափոխական պրոլետարիատի հետ,—քան թեկուզ մի բոպե մտածել Կազմկոմի կուսակցության, Չխեիձեի ու Ծերեթելու հետ միավորվելու մասին, որոնք հանդուրժում են Պոտրեսովի հետ կնքած բլոկը «Рабочая газета»-ում[23], որոնք քվեարկում են հօգուտ ռազմական փոխառությունների և գլորվել են դեպի «պաշտպանողականությունը»։ Այս նույն խորհրդակցությունում, որին մասնակցում էին նաև Ռուսաստան ժամանած Գրիմմը, Բալաբանովան և Ռակով-

19 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 35, էջ 320։

20 Տե՛ս Վ. Ի. Լենին, երկեր, հ. 36, էջ 511։

21 Протоколы Всероссийского (мартовского) совещания партийных работников, Вопросы истории КПСС, 1962 г., № 6, էջ 139։

22 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 35, էջ 247։

23 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 24, էջ 84։

սկին, նշվեց, որ Ցիմմերվալդի հերթական խնդիրը հանդիսանում է միասնական պլատֆորմի մշակումը, կապված Ստոկհոլմում բացվելիք խաղաղության կոնֆերանսին վերաբերմունք ցույց տալու հետ։ Արդեն նախկինում որոշվել էր, որ կոնֆերանսից երեք օր շուտ (Կինտալի որոշման համաձայն) պետք է հրավիրվի ցիմմերվալդյան նոր կոնֆերանս։ Այս խորհրդակցությունը փաստորեն ցիմմերվալդյան կոնֆերանսի նախապատրաստման ճանապարհին առաջին քայլն էր։ Խորհրդակցությանը բոլշևիկներից մասնակցում էին Լենինը, Զինովևը, Կամենևը, Ստալինը, մենշևիկներից՝ Մարտովը, Մարտինովը, Բինշտոկը, Լարինը, Բունդից՝ Աբրամովիչը, էսեռներից՝ Նաթանսոնը, մեժդայոնցիներից՝ Ռյազանովը, Ուրիցկին, Լեհաստանից՝ Գանեցկին, Լապինսկին[24]։ Խորհրդակցությունում երկու հոսանք ստեղծվեց։ Առաջինի մեջ մտան Լենինը, Զինովևը, Տրոցկին, Ռյազանովը, Կամենևը, Բալաբանովան։ Այս խումբը դեմ էր ամեն տեսակ համասոցիալիստական կոնֆերանսի մասնակցելուն, ընդ որում բոլշևիկյան ԿԿ-ի ներկայացուցիչները հայտարարեցին, որ իրենց ներկայացրած ֆրակցիան դուրս կգա Ցիմմերվալդից, եթե նա որոշի մասնակցել Ստոկհոլմի խաղաղության կոնֆերանսին։ Նրանք պահանջեցին, որպեսզի ԻՍՀ-ը մի մանիֆեստ ընդունի, որտեղ խիստ պետք է դատապարտվեն իմպերիալիստական կառավարությունների մեջ մտած սոցիալիստները։ Մյուս հոսանքի ներկայացուցիչները՝ Մարտով, Մարտինով, Աբրամովիչ և ուրիշներ, գտնում էին, որ նման մանիֆեստ հնարավոր չէ հրապարակել բոլոր ցիմմերվալդականների անունից։

Վ. Ի. Լենինը Ցիմմերվալդից դուրս գալու հարցն էլ ավելի սրությամբ դրեց ապրիլյան հռչակավոր թեզիսներում։ Նա ընդգծում էր, որ անհրաժեշտ է հիմնել նոր, III Ինտերնացիոնալ, պրոլետարական, լիբկնեխտյան Ինտերնացիոնալ, որը թշնամի է սոցիալիզմի դավաճաններին, սոցիալ-շովինիստներին և կենտրոնի տատանվողներին։ Մերկացնելով Ցիմմերվալդի հեղափոխական հնարավորությունների մասին եղած պատրանքները, Վ. Ի. Լենինը գրել է. «Ցիմմերվալդյան ճահիճն այլևս չի կարելի հանդուրժել։ Ցիմմերվալդյան «կաուցկիականների» պատճառով չի կարելի այլևս պլեխանովների և շայդեմանների շովինիստական Ինտերնացիոնալի հետ կիսով չափ կապված մնալ։ Անհապաղ պետք է կտրել կապերն այդ Ինտերնացիոնալից։ Ցիմմերվալդում պետք է մնալ միայն ինֆորմացիայի համար։

Հենց մենք, հենց այժմ, առանց հապաղելու պետք է հիմնենք նոր, հեղափոխական պրոլետարական Ինտերնացիոնալ, կամ ավելի շուտ՝ չվախենանք ի լուր ամենի խոստովանել, որ այն արդեն հիմնված է և գործում է»[25]։

Ցենտրիստներն ու աջ օպուրտունիստները ձգտելով արգելել Վ. Ի. Լենինի, բոլշևիկների ջանքերը, որոշեցին Ստոկհոլմում հրավիրել ՄՍԲ-ի[26] նիստ, իբր թե հաշտության հարցը քննարկելու համար։ Բայց նրանց նպատակն էր՝ համաձայնության գալ սոցիալ-շովինիստների հետ՝ II Ինտերնացիոնալը վերականգնելու համար։ Այդ իրականացնելու պարտականությունն իր վրա վերցրեց հոլանդա-սկանդինավյան կոմիտեն, որի ներկայացուցիչ Բորգբյերգը 1917 թ. ապրիլին եկավ Պետրոգրադ։ «Սոցիալիստ» Բորգբյերգի առաջարկու-

24 Տե՛ս А. Балабанова, Из личных восп. шим-ца, էջ 107—108։
25 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 81—82։
26 ՄՍԲ-ի Միջազգային սոցիալիստական բյուրո, II ինտերնացիոնալի ղեկավար օրգանը։

թյունը, որը փաստորեն գերմանական իմպերիալիստական կառավարության առաջարկն էր (նա հանգես էր գալիս գերմանական իմպերիալիզմի գործակալի դերում), հանդիսանում էր գերմանական իմպերիալիզմի ամենառեալ ու հրատապ քայլը այդ ժամանակաշրջանում, քանի որ վերջինս կանգնած էր պարտության փաստի առաջ։ Գերմանական կառավարությունը տոցիալ-շովինիստների միջոցով փորձում էր համաձայնության գալ Անտանտի երկրների հետ[27]։ Ռուսական մենշևիկներն ու էսեռները, որոնք ամեն կերպ արգելակում էին ռուսական հեղափոխության զարգացմանը, մեծ աղմուկ բարձրացրին Ստոկհոլմի նախապատրաստվող կոնֆերանսի շուրջը։ Նրանք ձգտելով մասնակցել ժամանակավոր կառավարությանը, աշխատում էին իրենց «դաշնակցային» պարտքը կատարել դաշնակիցների հանդեպ։ Այս հարցը քննարկվեց մեր կուսակցության հերթական՝ ապրիլյան 7-րդ կոնֆերանսում։ Կոնֆերանսը սկզբունքորեն անթույլատրելի համարեց «մեր կուսակցության մասնակցությունը այն կոնֆերանսին, որտեղ մասնակցում են Բորգբյերգը և Շայդեմանը, որովհետև մեր խնդիրն է՝ համախմբել ոչ թե տարբեր իմպերիալիստական կառավարությունների ուղղակի կամ անուղղակի գործակալներին, այլ բոլոր երկրների բանվորներին, որոնք արդեն պատերազմի ժամանակ հեղափոխականորեն պայքարում են իրենց իմպերիալիստական կառավարությունների դեմ»[28]։

Ապա բանաձևում նշվում էր, որ Ռուսաստանի պրոլետարական կուսակցությունը կհամաձայնվի խորհրդակցության գնալ և եղբայրական դաշինք կնքել մյուս երկրների միայն այնպիսի «բանվորական պարտիաների հետ, որոնք հեղափոխականորեն պայքարում են իրենց երկրում ևս ամբողջ պետական իշխանությունը պրոլետարիատի ձեռքը անցնելու համար»[29]։

Հարցին բոլշևիկյան մոտեցում ցուցաբերեցին նաև գերմանական ինտերնացիոնալիստները Լիբկնեխտի գլխավորությամբ։ Նրանց անունից Մերինգը Զխեիձեին գրած նամակում ասում էր. «Մենք հրաժարվում ենք մասնակցելու ամեն մի կոնֆերանսի, ուր պետք է մասնակցի գերմանական սոցիալ-դեմոկրատական մեծամասնությունը (Շայդեմանի պարտիա)։ Նրան պետք է համարել ոչ թե սոցիալիզմի ներկայացուցիչ, այլ միայն գերմանական կառավարության ու նրա շահերի ներկայացուցիչ։ Այդ «մեծամասնության» կոնֆերանսին մասնակցելը ծանր հարված կհասցնի ինտերնացիոնալ սոցիալիզմի գաղափարներին»[30]։ Ստոկհոլմի կոնֆերանսին դեմ արտահայտվեց նաև Ֆ. Ադլերը—դատարանում արտասանած ճառում, հայտարարելով, որ ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչը Ստոկհոլմ է գնում ոչ թե որպես «ինտերնացիոնալի կողմնակից», այլ կառավարության կամակատար[31]։ Ցավոք, այդ կոնֆերանսը նախապատրաստում էին այնպիսի կազմակերպություններ, որոնք մասնակցել էին ցիմմերվալդյան կոնֆերանսներին։ Միայն ձախերը դեմ էին դրան և կողմ էին «մասնակցելու՝ կառավարական սոցիալիստների դիրքը քննադատելու և նրանց մերկացնելու համար»[32]։

---

27 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 303—307։

28 ՍՄԿՊ-ն բանաձևերում և որոշումներում..., Երևան, 1954, էջ 429—430, կամ «Социал-демократ» № 69, от 31 мая (13 июня) 1917 г.

29 «Социал-демократ» № 69, от 31 мая (13 июня) 1917 г. կամ ՍՄԿՊ-ն բանաձևերում և որոշումներում, էջ 431։

30 «Социал-демократ» № 69, от 31 мая (13 июня) 1917 г.

31 Տե՛ս նույն տեղում։

32 Նույն տեղում։

Հակառակ ձախերին, Ստոկհոլմի կոնֆերանսի լուրը մեծ ոգևորությամբ ընդունեցին սոցիալ-շովինիստները։ Բուլղարական «Լայն» սոցիալ-դեմոկրատական կուսակցության օրգանը գրում էր. «Ուրախությամբ ողջունում ենք Հոլանդո-սկանդինավյան կոմիտեի կողմից հրավիրվող կոնֆերանսը։ Խնդրում ենք հաղորդեք ճիշտ թվականը, թե երբ պետք է մեկնի մեր պատվիրակությունը, Յանկա Սակիզով»[33]։ Հունգարական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչը գրում էր. «Ցանկալի կլիներ, որպեսզի կոնֆերանսը, որը հրավիրվում է ռուս ընկերների կողմից (Հոլանդո-սկանդինավյան կոմիտեից այդ կոնֆերանսի հրավիրման նախաձեռնությունը անցավ Պետրոգրադի սովետի մենշևիկ էլեմենտների ձեռքը), իրագործվեր Հոլանդո-սկանդինավյան կոմիտեի հետ միասին։ Բայց եթե այդպիսի համաձայնություն չլինի, ապա հունգարական պատվիրակությունը միևնույն է, կմասնակցի կոնֆերանսին— Վալտներ»[34]։ Կոնֆերանսի նպատակը մեկն էր՝ հարություն տալ II Ինտերնացիոնալի մահացած մարմնին։ «Известия»-ում տպագրված մի անանուն հոդվածում (1917 թ. հունիսի 16) նշվում է, որ II Ինտերնացիոնալի վերականգնումը («որ ցանկանում ենք մենք մեծ կրքոտությամբ»). «չի կարող լինել հասարակ վերաստեղծումն այն Ինտերնացիոնալի, չի կարող լինել վերականգնումն այն խարխլված շենքի, չի կարող լինել ինչ-որ համաձայնություն Հայդմանի, Վանդերվելդի և Թոմայի միջև մի կողմից և Շայդեմանի, Ռենների միջև մյուս կողմից, չի կարող լինել վերականգնումն սոցիալ հայրենասերների այն պլատոնական-պացիֆիստական միության, որը քայքայվել ու անուժ է դարձել պատերազմի ժամանակ, այլ նա պետք է լինի իսկապես նոր Ինտերնացիոնալ, գործողության Ինտերնացիոնալ, որի համար բանվոր դասակարգի միավորումը սրբազան գործ է»[35]։ Իզուր է հեղինակը ջանում գործն այսպես ներկայացնել, դա բացարձակ խաբեություն էր, մասսաների աչքերին թոզ փրչելու միջոց։ Նրա ցանկացած Ինտերնացիոնալն այդ ճանապարհով ստեղծել, այսինքն վերականգնման միջոցով, հնարավոր չէր։ Հոդվածի հեղինակը շարաչար սխալվում էր, կարծելով, թե Ստոկհոլմի կոնֆերանսը այդ ուղղությամբ մեծ գործ կարող էր կատարել։

Սակայն նա մոռանում էր, որ համաշխարհային պատերազմը ոչնչացրել էր Եվրոպայի «սոցիալիստական պարտիաների 40-ամյա աշխատանքի արդյունքները։ Նա ոչնչացրել էր պրոլետարական Ինտերնացիոնալը, եղբայրասպան մարտերի նետել նրա մի սեկցիան մյուսի հանդեպ»[36]։ Բայց ասել, թե վերջ էր տրված նոր Ինտերնացիոնալ ստեղծելու հնարավորությանը, սխալ կլիներ։ Նոր Ինտերնացիոնալը գործում էր, նա ծնվել էր բանվորական շարժման ընդերքում, ինտերնացիոնալիստական ուժերի համախմբման ճանապարհով։ Մնում էր միայն այն կազմակերպչորեն իրագործել։ Սակայն նրա ստեղծման ճանապարհին Վ. Ի. Լենինը, բոլշևիկները ահագին դժվարություններ պետք է հաղթահարեին։ Ապրիլյան կոնֆերանսում Զինովևն առաջարկեց դուրս չգալ Ցիմմերվալդից, իբր թե «պայմանները հասունացած չեն»։ Չհավատալով համաշխարհային պրոլետարիատի հեղափոխական ուժերի և հատկապես ռուսական պրոլետարիատի հնարավորություններին, Զինովևը ցույց էր տալիս,

33 «Известия Петроградского Совета», № 121, от 19 июля 1917 г.

34 Նույն տեղում։

35 «Известия», № 119, от 16 июня 1917 г.

36 «Правда», № 13, от 19 марта 1917 г.

որ նոր Ինտերնացիոնալի մեջ պետք է ներգրավել Ցիմմերվալդի բոլոր կողմնակիցներին։ Ըստ Զինովևի ստացվում էր, որ նոր Ինտերնացիոնալի մեջ կարող են ընդունվել ցենտրիստները, ձախերը և մյուս հարողները։ Հակադրելով այս թեզին, Վ. Ի. Լենինը ասում էր. «Քիչ են այն հույսերը, թե մենք որևէ մեկի էլ կգրավենք։ Հարկ չկա պատրանքներ ստեղծել մեզ համար»[37]։ Զինովևը գտնում էր, որ մեր այցը Ստոկհոլմ (Ստոկհոլմի 3-րդ ցիմմերվալդյան կոնֆերանս—Հր. Դ.) վերջինը կլինի։ Սակայն մեր կուսակցության մեջ դեռևս չգիտեին, որ Ցիմմերվալդում մեծամասնություն են կազմում կաուցկիականները, որոնք շարունակում էին վարել «սոցիալ-պացիֆիզմի քաղաքականությունը։ Ցիմմերվալդյան մեծամասնության տատանողական տակտիկան այն հետևանքն ունեցավ, որ որոշ երկրներում Ցիմմերվալդն սկսեց արդեն արգելք հանդիսանալ հեղափոխական շարժման համար»[38]։ Զինովևը գտնում էր, որ Ցիմմերվալդը պետք է մնա իր բարձրության վրա։ Լենինը գրում էր. «Իր վրա վերցնելով այդպիսի վերջնական սահմանազատման (Ցիմմերվալդից—Հր. Դ.) նախաձեռնությունը, մեր կուսակցությունը արդեն սկսել է համախմբել III Ինտերնացիոնալի տարրերը։ Մեր տակտիկայի և Կ. Լիբկնեխտի խմբի տակտիկայի համընկնումը պատահականություն չէ, այլ մի քայլ է դեպի ծնվող III Ինտերնացիոնալը տանող ճանապարհին»[39]։ Սակայն կոնֆերանսը որոշեց մնալ Ցիմմերվալդում. «Մեր պարտիան մնում է Ցիմմերվալդյան բլոկի մեջ, իր առաջ խնդիր դնելով պաշտպանել այնտեղ ցիմմերվալդյան ձախ թևի տակտիկան և հանձնարարում է ԿԿ-ին՝ անմիջապես դիմել III Ինտերնացիոնալ ստեղծելու քայլերին»[40]։ (Լենինը գտնում էր, որ պետք է մնալ ինֆորմացիոն նպատակով և տալ մանդատ մեր պատվիրակին, անհրաժեշտության դեպքում հեռանալու կոնֆերանսից)։ Զինովևը հայտարարում էր, որ «մենք այնտեղ (Ցիմմերվալդում—Հր. Դ.) եղել ենք նախաձեռնող մարդիկ և պետք է այնպես անենք, որ բոլշևիկները միայնակ դուրս չգան Ցիմմերվալդից, այլ դուրս գա ողջ ձախ խումբը»[41]։ Ապա նա շարունակում էր. «Մեզ վրա վերցնելով III Ինտերնացիոնալի ստեղծումը, մենք չենք եռաշխավորում (ընդգծումը մերն է—Հր. Դ.), որ մենք այն կստեղծենք հենց այժմ»[42]։ Լենինը գտնում էր, որ պայմանները դրա համար արդեն հասունացել են։ Կոնֆերանսն ընդունեց Զինովևի բանաձևը, սակայն նշեց նաև, որ մեր կուսակցությունն իր վրա է վերցնում III Ինտերնացիոնալի ստեղծման նախաձեռնությունը։ Քննադատելով Զինովևի բանաձևը և կոնֆերանսի որոշումը, Լենինը գրում էր. «...մրնալով Ցիմմերվալդում՝ մենք (թեկուզ և մեր կամքին հակառակ) մասնակցում ենք III Ինտերնացիոնալի ստեղծման գործի ձգձգմանը, մենք կողմնակի կերպով արգելակում ենք նրա ստեղծումը, կաշկանդված լինելով իդեապես-քաղաքականապես արդեն մեռած Ցիմմերվալդի մեռած բեռով»[43]։

Դեպքերի ընթացքը շուտով ցույց տվեց, որ Վ. Ի. Լենինը ճիշտ էր։ ԻՍՀ-ը և ամենից առաջ նրա նախագահ Ռորերտ Գրիմմը ավելի ու ավելի էր խճճվում

37 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 372։
38 Протоколы Апрельской конференции, էջ 254—255։
39 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 401։
40 Протоколы Апрельской конференции, էջ 255։
41 Протоколы Апрельской конференции, էջ 255։
42 Նույն տեղում։
43 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 91։

ճահճի մեջ։ 1917 թ. գարնանը Գրիմմը և ԻՍՀ-ը բանակցությունների մեջ մտան հոլանդո-սկանդինավյան կոմիտեի հետ, որի մեջ մտնում էին Սկանդինավյան երկրների երիտասարդ սոցիալ-շովինիստները։ Բանակցությունները նպատակ ունեին համաձայնության գալ Ստոկհոլմի խաղաղության կոնֆերանսի շուրջը։ Գերմանական սոցիալ-շովինիստները չեզոք երկրների իրենց գաղափարակիցների օգնությամբ ցանկանում էին այդ կոնֆերանսն օգտագործել փրկելու պարտության եզրին հասած գերմանական իմպերիալիզմին։ Վ. Ի. Լենինը դեռևս մեր կուսակցության Ապրիլյան 7-րդ կոնֆերանսում մերկացրեց այդ քաղաքականությունը, որպես «սոցիալիստական կոմեդիա», ժողովրդի աչքերին թոզ փչելու լավագույն միջոց։ «Սոցիալիստական համագումարի ամբողջ կոմեդիայի հետևում թաքնված է գերմանական իմպերիալիզմի ամենառեալ քաղաքական քայլը»[44]։ Վ. Ի. Լենինն առաջարկում էր. «անպայմանորեն անկարելի համարել այդ քաղաքականությունը վարող պարտիաների և խմբերի հետ միավորվելը»[45], ստեղծել զուտ ինտերնացիոնալիստական միավորում։

Բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ վճռականորեն հրաժարվեցին մասնակցել խաղաղության «սոցիալիստական» այդ «կոմեդիային» և մերկացրին նրա կազմակերպիչներին որպես իմպերիալիզմի գործակալների։ Վ. Ի. Լենինը ոչ միայն դեմ էր այդ «կոմեդիային» մասնակցելուն, այլ միաժամանակ շարունակում էր իր պայքարը Ցիմմերվալդից ձախերի դուրս գալու համար։ Հունիսին նա գրում էր. «...Մեր պարտիայի դրությունը—ամբողջ աշխարհի բոլոր բանվորական պարտիաների հանդեպ—այժմ հենց այնպես է, որ մենք պարտավոր ենք անհապաղ հիմնել III Ինտերնացիոնալը։ Բացի մեզնից, այժմ չկա ուրիշ մեկը, որ անի այդ, իսկ ձգձգումները վնասակար են»[46]։ Ժողովուրդներին հարկավոր էր այնպիսի Ինտերնացիոնալ, որը միավորեր իրոք բոլոր հեղափոխական բանվորներին, որն ի վիճակի լիներ վերջ տալ մարդկային զարհուրելի ու հանցապարտ սպանդին։ Իսկ այդ Ինտերնացիոնալը կարող են ստեղծել նրանք, ովքեր մարտնչում են ինչպես սոցիալ-իմպերիալիզմի, նույնպես և ցենտրիզմի դեմ։

Այն պահին, երբ բոլշևիկները Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ակտիվ պայքարի կամպանիա էին ծավալել երկու ճակատով, Ստոկհոլմի կոնֆերանսի դեմ և Ցիմմերվալդից դուրս գալու համար, ԻՍՀ-ի նախագահությունը Ռոբերտ Գրիմմի գլխավորությամբ հրապարակեց Ցիմմերվալդյան 3-րդ (Ստոկհոլմ) կոնֆերանսի հրավիրման մասին շրջաբերական մի նամակ, որում հայտնվում էր այն մասին, որ հրավիրվող ցիմմերվալդյան կոնֆերանսը պետք է իր վերաբերմունքը մշակի Ստոկհոլմյան խաղաղության սոցիալիստական կոնֆերանսի հանդեպ։

Գրիմմը այդ ուղղությամբ խոշոր կամպանիա ծավալեց։ Սակայն հոլանդո-սկանդինավյան կոմիտեի պլանները շուտով անհաջողության մատնվեցին։ Բանը նրանումն էր, որ ֆրանսիական և անգլիական սոցիալ-շովինիստները հրաժարվեցին մասնակցել Ստոկհոլմի կոնֆերանսին։ Այնուհետև կոնֆերանսի հրավիրման նախաձեռնությունը անցավ Պետրոգրադի սովետի համաձայնողական տարրերի ձեռքը։ Մենշևիկ պահպանողականները, մենշևիկ-ինտերնացիոնալիստները ակտիվորեն հանդես եկան Ստոկհոլմի կոնֆերան-

44 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 289։
45 Նույն տեղում, էջ 359։
46 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 91։

սում ցիմմերվալդականների մասնակցության օգտին։ Ստեղծված իրադրության մեջ էլ տեղի ունեցավ ՌՍԴԲ(բ)Պ ԿԿ-ի նիստը (1917 թ. մայիսի 23 (10)-ին, որտեղ միաձայն որոշվեց «պատգամավոր ուղարկել ցիմմերվալդյան կոնֆերանս՝ հանձնարարելով նրան անհապաղ թողնել այդ կոնֆերանսը և դուրս գալ ցիմմերվալդյան միությունից, եթե կոնֆերանսը արտահայտվի սոցիալ-շովինիստների հետ որևէ ձևով մերձենալու կամ նրանց հետ միասին գործերը համատեղ քննարկելու օգտին»[47]։ Դրանով ԿԿ-ն կիսով չափ ուղղեց Ապրիլյան կոնֆերանսում թույլ տված իր սխալը։ Մինչդեռ Գրիմմը և Բալաբանովան ցիմմերվալդյան կոնֆերանսի բախտը կապեցին սոցիալ-շովինիզմի և կաուցկիականության հետ։ Մի շարք խորհրդակցություններից հետո Պետրոգրադի սովետի գործկոմը ԻՍՀ-ի ներկայացուցիչների հետ միասին որոշեց կոնֆերանսը հրավիրել Ստոկհոլմի կոնֆերանսից 3 օր առաջ։ Այդպիսի որոշում կայացվեց 1917 թ. մայիսի 28—29 տեղի ունեցած խորհրդակցությունում Գրիմմի մասնակցությամբ։ Այստեղ ևս բոլշևիկ ներկայացուցիչները պնդում էին, որ Ցիմմերվալդը պետք է վճռականապես տահմանազատվի սոցիալ-շովինիզմից։ Ռոբերտ Գրիմմի և մյուս ցենտրիստների նպատակն էր այնպես անել, որ ցիմմերվալդյան 3-րդ կոնֆերանսում գերակշռող տեղ գրավի սոցիալ-շովինիզմի և պացիֆիզմի ոգին։ Մերկացնելով ԻՍՀ-ի այս քայլերը, Վ. Ի. Լենինը ստիպում էր ԿԿ-ի արտասահմանյան բյուրոյին[48], որ նա արագացնի զուտ ձախ ինտերնացիոնալիստների կոնֆերանսի հրավիրումը։ «Եթե արագացվի ձախերի միջազգային խորհրդակցությունը, ապա III Ինտերնացիոնալը ստեղծված կլինի»[49]—գրում էր Վ. Ի. Լենինը և առաջարկում որպես առաջին քայլ հրատարակել «ԿԿ-ի Ստոկհոլմյան եռյակի անունից (խոսքը Արտասահմանյան բյուրոյի կազմի մեջ մտնող Ռադեկի, Վորովսկու և Գանեցկու մասին է—Հր. Դ.), գումարած լեհերից, գումարած «Arbeiterpolitik»-ից, գումարած Խեգլունդից և Ընկ. հենց այժմ միջազգային կոչ միջազգային մասշտաբով միայն ձախերի խորհրդակցություն հրավիրելու»[50] մասին։ Մի այլ նամակում Վ. Ի. Լենինը նախազգուշացնում էր ԿԿ-ի արտասահմանյան բյուրոյին, որպեսզի նա չմիանա ցիմմերվալդականների հետ և բացահայտում էր Զինովևի տակտիկայի վնասակարությունը և օպորտունիզմը, որը փորձում էր իր կողմը գրավել ցիմմերվալդի ցենտրիստական մեծամասնությանը։ «Իմ կարծիքով,—գրում էր Վ. Ի. Լենինը,—դա արխիօպորտունիստական և վնասակար տակտիկա է։

«Նվաճե՞լ» Ցիմմերվալդը։

Դա կնշանակեր եզրից դեն նետել մեր բոլոր սկզբունքները, մոռանալ բոլորը, որ մենք գրել և ասել ենք կենտրոնի դեմ, շփոթվենք և խայտառակենք մեզ»[51]։

---

47 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 485։

48 1917 թ. մարտի 31-ին (ապրիլի 13-ին) Վ. Ի. Լենինը Շվեյցարիայից վերադառնալու ճանապարհին կանգ առավ Ստոկհոլմում և մասնակցեց ԿԿ-ի Արտասահմանյան բյուրոյի ստեղծմանը, որի ղեկավար էր նշանակվել բոլշևիկյան ականավոր գործիչ Վորովսկին։

49 «Ленинский сборник», т. 21, էջ 57։

50 Նույն տեղում, էջ 58։

51 Նույն տեղում։

Վ. Ի. Լենինի և բոլշևիկների մղած այս պայքարը իր հաղթական վախճանին հասավ Հոկտեմբերից հետո, երբ մասսաները հավատացին, որ Ցիմմերվալդի մեծամասնությունը իրոք որ իմպերիալիզմի շահերի պաշտպանության դիրքերում է կանգնած։

ГР. Х. ДАРБИНЯН

ИЗ ИСТОРИИ БОРЬБЫ БОЛЬШЕВИКОВ ЗА КОММУНИСТИЧЕСКИЙ ИНТЕРНАЦИОНАЛ ВО ГЛАВЕ С В. И. ЛЕНИНЫМ

(1917 февраль — 1917 сентябрь)

Резюме

В статье говорится о той борьбе, которую вел В. И. Ленин и руководимая им партия большевиков за создание Коммунистического Интернационала после Февральской революции в России. Эта борьба продолжалась вплоть до победы Октябрьской революции. После краха II Интернационала партия большевиков во главе с В. И. Лениным начала активную борьбу за сплочение сил, оставшихся верными идеям марксизма-ленинизма. Результатом этой борьбы явилось создание Циммервальдского объединения (1916 г.). Но вскоре выяснилось, что находящиеся в нем центристы, каутскианцы не намерены продолжать борьбу против войны и капитала. Поэтому В. И. Ленин уже в конце 1916 года поставил вопрос: выйти из этого объединения и создать революционный Интернационал только из левых, который продолжал бы лучшие традиции Интернационала Маркса и Энгельса.

Но среди большевиков были люди, которые не понимали необходимость разрыва с Циммервальдским объединением. В. И. Ленин вел непримиримую борьбу против таких тенденций и показал, что только в случае такого разрыва можно создать настоящий Коммунистический Интернационал. Октябрьская революция создала благоприятные условия для положительного решения этого вопроса.